

կութիւն կերակրել իւր նորածնին իւր ստինքով, այդ անկարողութիւնը անցնում է սերնդին: Այդ արատին միանում են այլ այլասերութեան իրենցութեան՝ նախատրամատրութիւն դէպի տուրքերկուօզը, ջղային հիւանդութիւններ, ատամների կերցաւ (ПОС-ПКСДЬ): Այդ տեսակ ընտանիքներում ծնուած երեխաները, զուրկ լինելով մօր կաթից, լինում են անբաւարար աննդառութեան, և այլասեռումը տարածւում է սերնդից սերունդ մինչև որ վերջա-նում է ամբողջ սեռը մի ամբողջ շարք ծանր տառապանքներից յետոյ»: «Կան երկու միջոցներ այդ այլասեռման դէմ 1, հեռաց-նել պատճառները և 2, սեռական ընտրութիւն»: Յայտնի պրօֆ. գրում է, իբրև ջերմ կողմնակից սեռական ընտրութեան, որ աշ-խարհ բերել հիւանդոտ երեխաներ՝ ծանր ժառանգականութեամբ, յանցագործութիւն է թէ նրանց մօտ և թէ մարդկութեան» ի վեր-ջոյ տալիս է յետագայ խորհուրդը՝

1, Պիտի պսակուել այնպիսի աղջկայ հետ, որը կերակրուել է իւր մօր կաթով:

2, Չպիտի պսակուել այն աղջկայ հետ, որը ունի տուրքեր-կուօզային, պսիխօզ և նեւրօպարիկ ժառանգականութիւն (ПСИХО и невропатик. наследственность)

3, Չպիտի պսակուել արբեցողի աղջկայ հետ

Այդ պահանջները և աղջիկը պիտի ունենայ դէպի տղա-մարդը»:

Քանի որ ներկայ կրթութեան սիստեմը թոյլ չի տալիս աղ-ջկան ծանօթացնել այն ամենի հետ, որ այնքան կարևոր է թէ իբրև տպակայ կնոջ և թէ մօր. հայ ծնողները պիտի առանձին ուշադրութիւն դարձնեն փեսացուի և նրա ընտանիքի անցեալի և փիղիքական առողջութեան վերայ:

Պրօֆ. Բունկէի փոքրիկ գրքոյկի բովանդակութեան եզրա-կացութիւնն այն է, որ տուրքերկուօզը, ալկօօլիզմը, պսիխօ-ջղային հիւանդութիւնները՝ յարուցանում են կանանց մօտ անըն-դունակութիւն կերակրել իրանց երախտներին և դորանից ծա-գում է՝ սերնդէ՝ սերունդ առաջացող նոյն անկարողութիւնը և ի վերջոյ՝ այլասեռում և իսպառ ոչնչացնում սեռը:

Շարունակելի

բժ. Բ. Աղասարեան

## ԳԱՅՐԵՆԻՔԻ ԶԱՅՆԸ

Գըլխին՝ փուշ-պըսակ, կըրծքին՝ ծանրը խաշ,  
Դալուկ ծակատին՝ տանջանքի կըննք,  
Ահա՛ կանգնած է աշխարհի առաջ  
Մեր Մայրն ալեւոր՝ մեր քսողը Հայրենիք...

Եւ մեզ հնչում է դարերի խորքից  
Մայրական ձայնը՝ մանկուց հարազատ.

— «Սիրելի որդիք, ընկե՛լ եմ փառքից,  
Ընկե՛լ եմ պատուից... Կեանքըս անազան՝  
Ապրեցի վայրկ, խղճով, սրգաւոր,  
Ապրեցի անյարգ, ըստրուկ ու գերի...  
Սրբի տակ թեքած զըլուխս ալետր՝  
Արեցի թոյնը մըռայլ դարերի...  
Բաղդն էր ինձ համար՝ խորթ մայր անողոր.  
Ես նըրա ձեռքին՝ ծանր ու խաղալիկ...  
Իմ՝ յոյսն ու երսզ, իմ՝ լացն ու ըողոր  
Փշրվեցին, որպէս ծովափնեայ ալիք... »

— «Բայց կարճ ժամանակ, ես էլ երջանիկ,  
Ազգերի շարքում անգ էի հրաւիրտ.

Գրեխիս յաղթանքի շողում էր դափնիք.  
Ոտքիս տակ փռում փոնջ, ծաղիկ ու վարդ...  
Իմ կեանքի երկինքն յստակ, կապուտակ —  
Կանաչ-կարմիրն էր այնտեղ շողշողում.  
Ինձ ողջունում էր գարնան արեգակ,  
Լուսոյ համայնքներ երեսիս ցօղում...  
Միշտ երգ ու նրանգ, սէր, ուրախութիւն  
Իմ պալատներում, իմ խորճիթներում.  
Դաշտերս ու արտերս ծաղկուն, ծաւալուն —  
Այնտեղ քրտնացող վաստակն էր եռում...  
Հնչում էր ազատ, հնչում օրհնալից  
Ուրախ զանգերի դողանջն անլռոյն  
Իմ նըւիրական սուրբ տաճարներից՝  
Հոյաշէն փրոված լեռնալանջերին...  
Եւ ձայնըս՝ հզօր, հայեացքըս՝ սլայծառ,  
Հոգուս սըլացքն էր ազատ, անկաշկանդ...  
Այսպէս արծիւն է երկնում լուսավառ  
Ծախրում վեհապանծ, քազմում սարաւանդ.

— «Անցան լոյս օրեր... Մութ գիշեր խորին  
Եկաւ ու զըլխիս փըռեց իր թեւեր.  
Անհուն կարօտով լուսազատ օրին՝

Հոգիս սուգ մըտաւ -- ու հազայ սեւեր...  
 Եւ իմ խնդճ որդիք՝ հողմահար տներւ՝  
 Մօր ծոցից խըլված՝ եղան ցիր ու ցան...  
 Կեանքիս երկնքում՝ սքողվեց արեւ,  
 Չըբացան լոյսեր, մարեց ծիածան...  
 Եւ դարեր-դարեր ծով-կարիքներում,  
 Արցունքի ծովում՝ յարտանջ լողորդ,  
 Ես պայքարեցի գոռ ալիքներում,  
 Ժաղկուն ափերի փայլին անհաղորդ...  
 Դարեր ու դարեր արին-արցունքի  
 Բաժակը ձնոքիս՝ շրջմային զամված,  
 Ես երազեցի լոյսը քարձունքի,  
 Կապուտակ կամար, ոսկի լուսաբաց...  
 Դարեր-դարեր սպանիչ լրծի տակ՝  
 Անցեալի յիւշն էր հոգիս բորբոքում:  
 Սուրբ ազատութեան անմեռ նահատակ՝  
 Ժերացայ, որդիք, բանտերի խորքում...»:

Գրչին՝ փուշ-պրսակ, կըրծ քին՝ ծանրը խաչ,  
 Դալուկ ծակատին՝ տանջանքի կընիք,  
 Ահա՛ կանգնել է նորից մեր առաջ  
 Մեր Մայրն ալեւոր՝ մեր քաղցր Հայրենիք...  
 Ես մաշված, հիւծված, անտէր անտէրո՞ւնչ,  
 Աչքերից արին-արցունք է հոսում...  
 Մե՛զ են, մե՛զ կանչում նըրա լաց, մրմո՞ւնջ,  
 Մե՛զ հետ են նըրա վերքերը խօսում...  
 Ես հառաչում է. — «Հասէք օգնութեան,  
 Սիրելի որդիք ձեր Մօրն արնաքամ...  
 Արձակէք ձնոքիս կապանքն ու շրջման,  
 Ձե՛զ եմ աղերսում ես վերջին անգամ...  
 Վերջին ժամն է այս... Հասէք, այ որդիք,  
 Վերքերըս կապէք, արցունքըս սրբէք...  
 Օ՛, տուէք ինձ կեանք ազատ, երջանիկ...  
 Ա՛յ յժմը կամ երբէք...»: